№. 88—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 88

1897 ՕԳՈՍՏՈՍԻ 3 (15) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարերկրացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ". կամ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՍԱՐԵԱՆՑ, սրտի ցաւօք յայտնում է ի գիտութիւն բարեկամաց և ազգականաց իւր սիրելի եղբօր՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՍԱՐԵԱՆՑԻ
մահը, խնդրում է չնորհ բերել յուղարկաւորութեան կիւրակէ, օգոստոսի 3-ին, իւր բնակարանից, որ գտնվում է Սաղովայա փողոցի վրայ № 44 դէպի Վանաց մայր եկեղեցին և այն տեղից Խօջիվանք։ (1—1)

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան թէ կառավարութեան թոյլտուութեամբ Ընկերութեան կանոնադրութեան § § 10 և 11 փոխուած են և Ընկերութիւնը 14 և 25 տարով փոխառութիւն տալուց անկախ, տալիս է փոխառութիւն նաև 36 ՏԱՐՈՎ ԵՒ 4 ԱՄՍՈՎ, վերցնելով 5%-ից 1% դրամագլխի չնջումն, $1/4$ % Վարչութեան ծախսերի համար և $1/4$ հիմնական դրամագլուխ կազմելու, ընդամենը տարեկան $6 1/2$ % սկզբնական դրամագլխի գումարից։ (3—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
Հին վէրքը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վեհ. Հայրապետի ուղեւորութիւնը։ Թաւրիզից։ Կովկասի կառավարչապետ։ Ալէքսանդրապոլից։ Բուխարայի էմիրը։ Գեներալ Կոլոկոլով։ Բժշկական միջազգային ժողով։ Դաստարանում։ Նոր լրագիր։ Բաթումից։ Դիլիջանից։ «Ամառնային նամակներ»։ Մի զառ սուլթանին վիրաւորելու մասին։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Անմահական ծաղիկ։
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—Հայոց թատրոնը Թիֆլիզում։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՋԱՆԱԶԱՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ՖՐԱՆՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ

Ֆրանք-հայկական կոմիտեը խորհրդի նախագահին ընդարձակ նամակ է ուղարկել Թիւրքիայի հայերի ներկայ դրութեան վերաբերմամբ։ „Gaulois"-ն այդ նամակից հետեւեալ քաղուածքն է առաջ բերում.

«Սպանութեանց շրջանը դեռ չէ վերջացել Թիւրքիայում, և Թեսալիայում գտնուած թրքական բանակի մի մասի շուտով Հայաստան վերադառնալը աւելացնում է նոր սպանութեանց վտանգը։ Այդ զինուորները՝ գրգռուած մոլեռանդութեամբ և ատելութեամբ դէպի քրիստոնեաները և կատաղած իրանց յաղթութեամբ՝ բորբոքուած դրութեան մէջ պիտի վերադառնան իրանց տները կողոպուտի և արեան ծարաւով։ Թէ ինչ վտանգ է սպառնում հայերին Թուրք զինուորների այդ վերադարձը,—կարելի է գտնել ի նկատի ունենալով անցեալի օրինակները»։

Այդ նամակի մէջ մի առ մի թւուած են այն բոլոր վտանգները, որոնք սպառնում են հայերին և ապա ցոյց են տրվում միջոցներ, որոնցով կարելի կլինի առաջիկայ վտանգների առաջն առնել։ «Եթէ խելոք միջոցներ ձեռք չառնուեն հայերին պաշտպանելու համար—ասուած է նամակի մէջ—Հայաստանը կրկին կողոպուտի անմեղ զոհերի արիւնով, ինչպէս այդ եղաւ 1895 թւին։ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածն ուղղակի ցոյց է տալիս որ Եւրոպային և մանաւանդ Ֆրանսիային իրաւունք է տուած սուլթանեան կառավարութիւնից անհրաժեշտ երաշխաւորութիւններ պահանջել հայ հպատակների անձնական ապահովութիւնն ապահովելու համար։ Եւ եթէ հայերին ժամանակին չէ տրուել այդ ապահովութիւնը, դրա յանցանքը միաժամանակ և հաւասար չափով ընկնում է և Թուրք կառավարութեան և եւրոպական կաբինետների վրայ»։

Այդ նամակն ստորագրել են բազմաթիւ անձինք, որոնց թւումն են Ֆրանսուա Կոպպէ, Անատոլ Ֆրանս, Վանդալ, Պօլ Բուրժէ, Արման Գոտիէ, մարքիզ դէ Վօգիւէ, բարոն դ'Ավրիլ, Դենի Կօշէն, աբբա Լըմիր, Էլրուա Բոլիէ, կոմս Ալբէրտ դը-Մեօն եւայլն եւայլն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԵՐԿԻՒՂԸ

Հայկական նոր շարժումների մասին տարածուած լուրերի առթիւ „Berliner Tageblatt"-ը հաղորդում է. «Որովհետև Եւրոպան անցեալ տարի այսպէս անուանուած հայկական խնդրում անզօր էր մնում և չնայելով կատարուածներին ոչինչ չարաւ, ուստի առաջիկայ տարին ցանկանում են թշնամական ցոյցերով, կամ բացարձակ յարձակումներով հարկադրել դեսպաններին և Թուրք կառավարութեան ուշք դարձնել գանգատների վրայ։ Թուրք կառավարութիւնը իբր թէ գիտէ հայերի դաւադրութեան մասին, բայց նրանց առաջ առնելու միջոցներ չէ ձեռք առնում, որպէսզի այդպիսով, վերջին բոլէին, աւելի ծանրապէս պատժէ հայերին։ Իբր թէ ոչինչ չէ արել և հայոց պատրիարքը և չէ արդարացրել հայերի յոյսերը և, փոխանակ իւր հօտին եռանդուն պաշտպանութիւն ցոյց տալու, միայն պաշտօններ է տուել իւր ազգականներին։ Ընդհակառակն — շարունակում է թղթակիցը—ոչ մի կասկած չկայ որ Դուռն ամեն ջանք գործ է դընում ապստամբութեան առաջն առնելու համար, որովհետև վախենում է որ եթէ անցեալ տարուան դէպքերը կրկնուին, իրան կմեղադրեն իբրև առիթ տուող այդ շարժումներին, ուստի անդադար բազմաթիւ բանտարկութիւններ են լինում և փողոցները գիշեր և ցերեկ հսկողութեան տակ են։ Ճշմարիտ է, արտասահմանից այստեղ եկել են գրգռիչ ագէնտներ, սակայն ես չեմ կարծում թէ ապստամբութիւն պայթի, որովհետև Թուրք ժողովրդի այժմեան գրգռուած դրութիւնը և զօրքերի կենտրոնացումն ի նկատի ունենալով՝ ապստամբութիւնը խելագարութիւն կլինէր»։

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից հաղորդում են, որ այնտեղ վերջին ժամանակ առանձնապէս յաճախում են այն անձանց ձերբակալութիւններն, որոնք կասկածելի են թւում հայկական և երիտասարդ տաճկական շարժումների մէջ։ Մինչև անգամ առանձին ատեան է կազմած Ըլչիզ-փաշայի նախագահութեամբ դատելու համար այդպիսի անձանց և այդ ատեանն ամենևին չէ քաշվում դատապարտութեան կնիք դնելու նրանց վրայ, որոնց դէմ յանցաւորութեան ակնյայտնի ապացոյց չկայ։ Լուր կայ, որ մինչև անգամ սուլթանի հարճանոցից 14 կանայք ձերբակալուած են, որոնցից 10 հոգի աքսորուած են Եմէն։ Կալանաւորուած է յայտնի ապստամբ մարշալ Օմէր-փաշայի քարտուղարի որդին։ Բացի սրանցից ձերբակալուած են բազմաթիւ զինուորական և քաղաքական պաշտօնատարներ։

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

«Politische Corresp.» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում բանակցութեանց մասին յունական ելևմտից վրայ նշանակուելու կոնտրոլի և Թեսալիայից տաճիկ զօրքերի հեռանալու խնդիրների վերաբերութեամբ։ Նա ասում է, որ երկրորդ յօդուածի, այն է Յունաստանի պատերազմական վարձատրութեան վճարման ապահովութիւնն ու նրա ելևմտից վրայ կոնտրոլ նշանակելը և Թեսալիայից տաճիկ զօրքերի հեռանալուն վերաբերեալ վեցերորդ յօդուածի խմբագրութիւնները յետաձգուեցին, պետութեանց մէջ ծագած տարաձայնութեանց առթիւ և դեսպանները զբաղուեցին նախկարդ խաղաղութեան միացեալ 11 յօդուածների խմբագրութեամբ։ Այս աշխատանքը վերջացնելուց յետոյ հարկաւոր էր ձեռնամուխ լինել վերոյիշեալ երկու յօդուածների խմբագրութեան։ Իւրաքանչիւր պետութեան դէպի այդ խնդիրները վերաբերութեան եղանակները նշանաւոր են նրանով, որ նրանց մէջ արտափայլում է իւրաքանչիւր պետութեան արևելեան քաղաքականութիւնը։ Ամենից պարզ և անբեկդիմի երեւցաւ Գերմանիայի վարմունքը։ Նրա պաշտպանութիւնն էր բնական գործնական շահը, պաշտպանել Յունաստանի նախկին գերմանացի պարտատէրերին վնասից, որ կարող էր տեղի ունենալ Յունաստանի նոր պարտք անելով փոխառութեամբ, Տաճկաստանին հասանելի վարձատրութիւնը վճարելու համար։ Այս նպատակով Գերմանիան առաջարկեց II-րդ յօդուածի առաջին խմբագրութեան մէջ մի քանի փոփոխութիւններ ներմուծել։ 2-րդ յօդուածի նախկին խմբագրութիւնն էր. «պատերազմական վարձատրութիւնը փութով վճարելու համար համաձայնութիւնը կը կայանայ մեծ պետութեանց մասնակցութեամբ այնպէս, որ նա վնաս չպատճառէ Յունաստանի նախկին պարտատէրերին»։ Գերմանական դեսպանի պահանջմամբ այդ յօդուածը խմբագրուեց հետեւեալ ձեւով. «Պատերազմական վարձատրութեան փութանակի վճարումն դիւրացնելու համար՝ վարչութիւնն այն պետական արդեանց, որոնք նշանակած են Յունաստանի հին և նոր պարտքերը ծածկելու համար, ենթարկել պետութեանց կողմից նշանակուած պատուիրակների կոնտրոլին»։ «Koeln. Zeit.»-ը սրա վրայ աւելացնում է, թէ Գերմանիայի առաջարկած և պետութեանց հաւանութիւնը գտած կոնտրոլը կըկազմակերպուի հետեւեալ եղանակով. Յունաստանի որոշ արդեանց վարչութիւնն, որոնք բաւական կըհամարուին թէ հին և թէ նոր փոխառութեանց տոկոսները վճարելու համար, կըյանձնուի միջազգային յանձնաժողովին, որ կըզբաղուի տոկոսների վճարմամբ։ Եթէ ժամանակի ընթացքում արդիւնքները բազմանան, աւելացած գումարը պէտք է յատկանան յօգուտ պարտատէրերի, իբրև տոկոսների յաւելուած։ Յանձնաժողովը չի միջամտիլ Յունաստանի պետական ծախսից մէջ, ինչպէս և պետական այլ արդեանց տնօրէնութեան մէջ, որոնք որոշուած չեն փոխառութեանց ապահովութեան համար։

ՀԻՆ ՎԷՐՔԸ

Այս օրերս ամենայանդուգն չարագործութիւն կատարուեց Ղազախի գաւառում։ Երկրի վրայ անընդհատ սարսափ տարածող, չարունակ անպատիժ մնացող Թուրք աւազակները սպանեցին նրանց հետամուտ եղող ոստիկանական պրիստավին, նրա քարտուղարին և հասարակ գիւղական հեծեալ ոստիկաններին։ Ոստիկանի արիւնալի դէպքը դեռ նոր է, թարմ է, ուստի և հասկանալի է նրա արած տպաւորութիւնը և բարձրացրած աղմուկը։ Բոլոր լրագիրների թղթակիցները միաբերան, այդ դէպքի առթիւ, վկայում են թէ «ազգաբնակութեան վրայ սարսափ է տիրում»։ Սակայն մի՞թէ նոր է այդ սարսափը և մի՞թէ նա երբ և իցէ ընդհատուել է։ Հարաւային Կովկասի Գանձակի, Բագուի և մասամբ Երևանի նահանգներում երբէք չեն դադարել աւազակութիւնները, կողոպուտները և սպանութիւնները, որոնց հերոսները միշտ առանց բացառութեան եղել են տեղական թիւրքերը։

Պաշտօնական անձանց սպանութեան առաջին օրինակը չէ, որ կատարվում է Ղազախում և աւազակները աւելի բարձր աստիճանա-

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱՆՄԱՀԱԿԱՆ ԾԱՂԻԿ

(ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

Ա.

Իսկ և իսկ այնտեղ, ուր ամպածրար Մասիսը՝ իւր փայլուն ճակատով որպէս խնամակալ և պահապան հրեշտակ, նայում է բարձրից դէպի ցած երկրի վրայ, դէպի Բարդող լեռների մի սուր եռանկիւնաձև գագաթի վրայ, հէնց այնտեղ, այդ նշանաւոր լեռնագագաթի մօտ է գտնվում Դայլոտան պատմական լիճը (Բալըղ—գեօլ), որի հաւասար և ուղիղ գծագրութեամբ ձգուած ափերի շուրջը՝ ամառային մի քանի ամիսներում սևին են տալիս Թուրք, քուրդ, հայ վըրանաբնակ ժողովրդի բազմաթիւ վրաններ։ Գիւղական խաշնարած ժողովրդի յատուկ բնաւորութեան մէջ մի մնացած իղձ է, գարնան վերջերում դաշտային բնակավայրերից աստիճանաբար բարձրանալ դէպի վեր, բլրակներ, հովիտներ, ձորեր, սարահարթերի և լեռների վրայ հանգստանալ։ Այնտեղ օդը կենսատու է, աղբիւրները պաղ, պարզ ու վճիտ են, իսկ ծաղիկ—ծաղկունքը իրանց ուրախ ու զուարթ հազարեւոր գոյներով փայլում, փայլփլում, անմահական հոտ են բուրում, սաստատում են ույն ու գառը, բառանչում են հորթն ու կովը. և այն ժամանակ խաշնարածի հոգւոյ անսահման ուրախութեան մէջ թաղւում է խաղաղ, պարզ և անվերջ գոհունակութիւն դէպի անմահ բնութիւնը, դէպի եթերային անհուն ազատութիւնը, որի հովանաւորող ձեռքերի տակ ադամ—որդին կեանքի ամբողջ գոյութեամբ ժպտում է և մխիթարվում։

Բնութեան այդ սքանչելի օդի մէջ էին ծնուած ու սնուած երկու զոգորիկ էակներ—Մարինոսն ու Ասլանը. Լեռնային դրութիւնը ներշնչել էր նրանց մէջ հոգւոյ վեհութեան հետ և կամքի ոյժ ու հերոսական բնաւորութիւն, իսկ բաց-բեկ օդը չէր խնայել զարդարել նրանց արտաքինը գեղարուեստական բոլոր բարեմասնութիւններով։ Թէպէտ Ասլանն ու Մարինոսը լոյս աշխարհ եկած օրից մանկութեան անմեղ ժամերի խաղընկերներ էին, թէպէտ երկուսն էլ համագիւղացի և առանձին, առանձին ծնողաց զաւակ էին, բայց նրանց նոյնանման կենցաղավարական պայմանները, կեանքի միշտ միօրինակ կեցութիւնը անծանօթին տեղիք էին տալիս կասկածելու նրանց առանձին ծնողաց զաւակներ լինելու մասին։

Անցել, գլորուել էին տասն և ութ գեղեցիկ գարուններ այն օրից, երբ ծընողաց մի հատիկ զաւակ Ասլանը թողել, հեռացել էր երեխայական անմեղ խաղերից, այժմ նա մի ամբողջ տան կառավարիչ էր, չատերը նրա ձեռքն էին նայում, նրա արդար աշխատանքովն ապրում. այժմ նրա մանկական փայտէ ձիուն փոխարինում էր սեաթոյր նժոյգը, իսկ բրթից ոլորած անձայն պարսատիկին՝ որոտացող հրացանը։

Լեռնային կեանքին յատուկ ձիրքերով օժտուած Ասլանը, իւր նախնեաց հուշակն ունէր, ձիարշաւն ու մականախաղը նրա բնաւոր զէնքն էր, իսկ վահանով կռուելն ու մենամարտութիւնը նա փոքր հասակից գիտէր, երբ դեռ ևս զաւակ էր։ Ասլանն անվեհեր սիրտ ունէր, քաջ, համեստ ու ընկերասիրութեան մէջ, արագոտն եղնիկը նրա հըրացանի գնդակից չէր ազատւի. որսորդի քաջ անուան տակ, նա ազատախօս էր լեռնային թագաւորութեան մէջ, իւրաքանչիւր կին, թէ տղամարդ Ասլանի անունը մեծ պատկառանքով ու ակնածութեամբ էին յիշում. այդ հասակի մէջ Ասլանը շատ նմանութիւն ունէր իւր քառասուն և հինգ տարեկան Մուշեղ հօրը, երկար և ուղիղ հասակով, լայն թիկունքով, սև, գանգուր ու խիտ մազերով, իսկ արծուաքիթը և սև արտևանունքը նրա դէմքի առնական նշաններն էին։

Որքան Ասլանի ոյժերի հետ աւելանում էր նրա փառքը, այնքան աւելի նախանձում էին նրա հակառակորդ ախոյանները. քուրդը նախանձում էր, նա չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ մի հայ անհատ կարող էր նսեմացնել աշիրաթ *) անունը, ստուեր ձգել աշիրաթների ամբողջ ցեղերի վըրայ։ Լեռների որդիները Ասլանով էին յափշտակուած, նրանց միտքը տանջող առարկան միայն Ասլանն էր, ամեն տեսակ խորամանկ որոգայթներ, դաւադրութիւն պատրաստ էին Ասլանի կեանքի դէմ, բայց այդ բոլոր չարեաց մըտքերը շուտով ջախջախվում, փշրվում էին երիտասարդի զգուշութեան և զօրեղութեան առաջ, որովհետև Ասլանը իւր խորհրդատու մենտորն ունէր, նա կըրթվում էր իւր հայր Մուշեղի հրահանգներով և առաջնորդվում էր նրա փորձառու խրատներով։

*) Դիւցազն

Բ.

Ժամանակը կարճ էր Զիլանցի *) Քեհլաչ աղայի վրանի առաջ ծածանում էր եռագոյն դրօշակը և այդ նշան էր մականախաղի հրաւէրքի։ Ամեն կողմից, հեռաւոր վրաններից թափուել, եկել էին, առանց խտրութեան կրօնի և ազգութեան, հայ, թուրք, քուրդ եայլն, իւրաքանչիւրը իւր ոյժը, իւր քաջութիւնը ցոյց տալու աշխարհին. յաղթական փառքն ու պսակը ստանալու համար մեծ չարժում կար, ամբոխը ականատես էր հերոսների իւրաքանչիւր օրուայ զինակրթական վարժութիւններին. կանայք և աղջկերք իրանց մտաւոր ստեղծագործութիւններն էին պատրաստում օրուայ հերոսի քաջ անուան նուիրելու, իսկ այդ անմահացնող խօսքերն ու բառերը հովուական սրնգի ոլորուն և ներդաշնակ մեղեդիներն էին կազմում, ամբոխի մէջ զանազան տեսակ խառն ի խուռն շշուկներ էին լսվում, օտարները աւելի պարծանքով և ուրախ էին խօսում Դիարբաքիրից եկած քրդական խմբերի մասին, «այս անգամ ֆըլլա *) Մուշեղն էլ չի կարող ասպարէզ դուրս գալ» ասում էին քրդուհի հարսն ու աղջիկը։

*) Քրդական ցեղ։

—Աղջի, ախչի, Զանօ, բացադանչեց Մարջանը իւր խօսակից քրդուհուն, ճանաչո՞ւմ ես Զարոյին, ես նրա սև աչքերին մեռնեմ, նա ինձ համար է եկել Դիարբաքիրից, նա Մուշեղ ֆլլային իւր գործ ձիու ոտքերի տակ պէտք է տրորի ու ինձ պէտք է տանի, ես նրանն եմ ու նրա համար եմ ապրում։

—Չէ, չէ, Մարջան, էն ֆլլայ Մուշեղը որ մէջ ընկաւ, էլի էն անիծածը կըյաղթէ, էս չորս տարի է մեզ արիւն լացացրեց, մեր հոգին մեր բերանը հասցրեց, մեր քրդերից ոչ մէկը չի կարողանում էդ անհաւատի հետ կռուել, հիմա տեսնենք, Աստուած տայ որ էս անգամ մէյդան դուրս չգայ, թէ չէ մեր զօնաղները էլի ամօթով յետ կըդառնան։

—Գիտե՞ս ինչ կայ, Զանօ, դողդոջուն ձայնով ասաց Մարջանը, ես էլ շատ լաւ եմ իմանում Մուշեղի քաջութիւնը, բայց եթէ Մուշեղը դուրս կըգայ, նրա որդի Ասլանն էլ պակասը չի. «Ասլանը ասլանից է դուրս գալիս» թէպէտ նա ջահել է, թէպէտ անփորձ է, բայց դրա մէջ ինչպէս ասլանի ոյժ կայ, Քեհլաչ աղան երդուել է Օմարի գերեզմանով, եթէ այս անգամ էլ Մուշեղը յաղթեց, պէտք է նրանց մեր եայլաղատեղից բոլորովին զրկենք։

*) Հայ ստրուկ։

—Ճշմարիտ է, մէջ մտաւ մի երրորդ քրդուհի, ես վախենում եմ, որ էս անիծածները դարձեալ մեր աշիրների երեսը սևացնեն. քաւանան դրանք, չորանայ դրանց ծնունդը,—սկսեց մի չարք հայհոյանք ու անէծք թափել Մուշեղի ու Ասլանի հասցէին։

Պարզ գիշեր էր, երկինքը իւր սովորական զարդարանքի մէջ էր. փայլում էին մեծ ու փոքր աստղեր. սև վրանների տակ պլպլում էին գիշերային վառ ճրագները, այդ վրաններից մէկը, որ զանազանվում էր միւսներից իւր մեծութեամբ ու շատ քիչ հեռաւորութեամբ, դա Մուշեղի վրանն էր, որի տակ նահապետական պարզութեամբ Մուշեղը, Ասլանը և նրա մայր Մարօն ապրում էին։ Գիշերը հեռզհետէ մթնում էր, Մուշեղն ու Մարօն կարծես խռոված, անհամբեր սրտով մէկին սպասում էին։

—Օ՛ղման, Օղման, ձայն տուեց Մուշեղը, (այսպէս էր կոչվում Մուշեղի եղբօր քուրդ հովիւը), Ասլանը ո՞ր ձորով գնաց, ինչի՞ ուշացաւ։

—Չեմ գիտեր *), ախա ջան, պատասխանեց Օղմանը։

*) Արարատեան դաշտի եզեքի քրդերը բառ մեծի մասին խօսում են հայերէն, գաւառական բարբառով, և գործ են ածում քրդերի առաջին և երրորդ դէմքերի փոխարէն երկրորդ դէմքը։

ւորներ են սպանել քան ոստիկանական պրիստավ. օրինակ Զիւանշիրի գաւառի Կուսապատ գիւղում մի քանի տարի առաջ սպանուեց և կողոպտուեց կառավարչական պաշտօնեայ գինուորական գնդապետ Վիլման։ Դեռ տարին չէ լրացել այն օրից, որ Բագւում սպանեցին երիտասարդ երդուեալ հաւատարմատար Մոորասեւսկուն։ Եթէ բըլական տարեգրութեան յետ նայենք, դեռ օրինակներ շատ կան, ուստի զարմանալի չէ որ այս անգամ ևս ոստիկանական պրիստավն է զոհ գնացող աւազակների գնդակներին և այն էլ այնպիսի հանգամանքներում, երբ աւազակները խուսափում էին ձերբակալուելուց և ամեն միջոց պատրաստ էին գործ դնելու արդարադատութեան ձեռքը չընկնելու համար։

Ի հարկէ ոստիկանական պրիստաւի արիւնը աւելի կարմիր և մաքուր չէ, քան այն հազարաւոր գիւղացիներինը, վաճառականներինը և ամեն դասակարգի պատկանող բնիկներինը, որոնք չեն ազատվում աւազակների գնդակներից և դաշոյններից, բայց ներկայ դէպքում ժողովուրդը սարսափում է տեսնելով որ նոյն իսկ կառավարութեան պաշտօնեաների կեանքն ապահով չէ, ուրեմն և խօսք անգամ չէ կարող լինել իր կայքի և կեանքի ապահովութեան մասին։

Եթէ Կովկասի աւազակութեանց և նրանց արմատախիլ անելու վերաբերմամբ գրուած լրագրական յօդուածները և պաշտօնական գրագրութիւնները ժողովենք, հատորներ կըգոյանան, բայց մինչև այսօր այդ գրուածները մի մազաչափ ազդեցութիւն չեն կարողացել ունենալ աւազակութեանց և սպանութեանց պակասելու վրայ։ Եւ հազիւ թէ այսուհետև ևս ազդեցութիւն անեն։ Աւազակը լրագիր և պաշտօնական գրագրութիւն չէ կարդում, իսկ իր պարտաւորութիւնը կատարել ցանկացող ոստիկանը սպանվում է աւազակից։ Ո՞վ երաշխաւոր է, որ իշխան Արաշխձէին սպանող աւազակներին հետամուտ եղող և ձերբակալել ցանկացող մի այլ պաշտօնեան ևս չի ենթարկուիլ սպանուածի վիճակին։

Մինչև այժմ, պաշտօնական շրջաններում, մամուլի էջերում և հասարակութեան մէջ այն համոզմունքն է կազմուել, թէ աւազակութիւնները հետզհետէ զարգանում են, որովհետև 1) գիւղական թուրք հասարակութիւնը թաքցնում և պաշտպանում է աւազակներին երբեմն նրանց համակրելով և գործակից լինելով, երբեմն վախենալով նրանից, 2) երկրի քրիստոնեայ գիւղական տարրը զինուած չէ, որ պաշտպանուելու և աւազակներին հետամտելու միջոցներ ունենայ, 3) ոստիկանութիւնը թոյլ է և կարևոր միջոցներ չէ ձեռք առնում երկրի ապահովութեան համար։

Ի հարկէ այդ պատճառաբանութիւնների դէմ ոչ որ չէ վիճում, դրանք ճիշտ են, այդ ամենը կան, ճիշտ է որ թուրք գիւղացիք պաշտպանում և թաքցնում են աւազակներին, ճիշտ է որ հայ, ռուս, յոյն գիւղացիք զինուած չեն, ճիշտ է որ ոստիկանութիւնը թոյլ է։ Բայց, նախ—ինչո՞վ կարելի է հարկադրել թուրք գիւղացիներին որ նրանք այլևս չպաշտպանեն աւազակներին, երկրորդ ինչո՞վ կարելի է հարկադրել խաղաղ երկրագործ ժողովրդին հրացաններ վերցնել և շարունակ կռուել աւազակների դէմ։ Գալով երրորդ կէտին, մենք տեսնում ենք թէ ինչ դրութեան է ենթարկվում այն պարտաճանաչ ոստիկանը, որ թոյլ չէ վարվում, այլ գնում է աւազակներին հետապնդելու. նրան սպանում են, դիակն անպատվում և գլուխը կտրում տանում... Կրկնում ենք, ո՞վ է երաշխաւոր որ աւազակներին հետամուտ եղող ամեն մի պաշտօնեայ չի ենթարկուիլ նոյն վիճակին։ Քաւ լիցի, որ կարծեն թէ մենք այն կարծիքին ենք որ պէտք է բարձի թողի անել ամեն ինչ։ Ընդհակառակն մենք ևս հասարակաց ձայնի հետ միասին բողոքում ենք և անհրաժեշտ համարում որ քրիստոնեայ գիւղական տարրին զէնք տրուի աւազակներից պաշտպանուելու համար, որ ոստիկանական աչալուրջ պաշտօնեաներ նշանակուեն ժողովրդի հանգստութեան վրայ հսկելու համար. բայց երբէք չենք կարող համաձայնուել, որ դրանով աւազակութիւնը արմատախիլ կըլինի երկրից։

Աւազակութիւնները մարդասպանութիւնները Կովկասի վերև յիշած գաւառներում անպակաս կըլինին քանի որ Միջին-Ասիայի նման վայրենի ցեղերի սերունդ Կովկասեան մահմեդականները կըմնան մտաւոր այն աստիճանի վրայ, որի վրայ են այժմ։ Նրա աշխարհահայեցողութեամբ աւազակութիւնը քաջութիւն է, հետևաբար և առաքինութիւն, նա մօր կաթի հետ է ծծում մարդ կողոպտելու և սպանելու ոգին և չնայելով որ ապրում է քրիստոնեայ և քաղաքակրթուած պետութեան մէջ, բոլորովին անծանօթ է նրա օրէնքներին և քաղաքակրթութեանը։ Մինչև այսօր, բառի բուն նշանակութեամբ, ոչինչ չէ արած թուրք մահմեդական տարրի կրթութեան համար և գիւղական թուրք տարրը չգիտէ անգամ թէ ինչ ասել է ուսումն ու կրթութիւն։

Տասնեակ տարիներով «էկզեկուցիաներ» նշանակելը այն չէ կարող անել, ինչ որ կանէ մի գիւղում բացուած տարրական դպրոցը, որ վայրենի ստմաղին իր հասկանալի լեզուով կաւանդէ գիտութեան տարրական սկզբունքները և լոյսի ճառագայթները առաջին անգամ կըձգէ խաւարի մէջ խարխափող նրա ուղեղի և սրտի վրայ։ Դրան ապացոյց է այն մեծ քաղաքակրթական ազդեցութիւնը, որ ունեցան հայ գիւղացիների վրայ հայ տարրական դպրոցները...

Անշուշտ, արդէն կողոպտած, բռնացած աւազակի համար չէ դպրոցի լոյսը, ոչ, նրա վրայ պէտք է ազդել ճնշմամբ և ուժով, այլ նոր սերունդի համար։ Եւ եթէ բուն մարդասիրական տեսակէտից աւազակ թուրք տարրը չէ արտաքսվում երկրից, ուրեմն իսկական մարդասիրութիւնը պահանջում է նրա ապագայ սերնդի կրթութեան համար հոգ տանել, որ նա իր նախնեաց պէս աւազակ չլինի, այլ խաղաղ և ընդհանուր քաղաքակրթութեան մշակ։

Սակայն թուրք մահմեդական տարրը ինքնուրոյն քաղաքակրթութեան ընդունակ չէ, նրա մէջ ինքնուրոյնաբար խմբելու չէ ծագում իր զաւակի համար դպրոց բանալու. Կովկասում այդ անում է միայն հայը, իսկ մահմեդականի համար պէտք է բանալ դպրոցը և մինչև անգամ բռնի սովորեցնել նրան յանուն երկրի ապագայ երջանկութեան և խաղաղութեան։

Մինչև չկրթուի մահմեդական տարրը, նրա մէջ աւազակութիւնը միշտ կըմնայ հին վէրք։

Ս. Հախումեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Նով. Օբոզր.» մէջ կարդում ենք. «Մեր ստացած տեղեկութիւններով ճշտվում է մայրաքաղաքի լրագրների այն լուրը՝ թէ Վեհափառ Կաթողիկոս Մկրտիչ I-ը շուտով պիտի ուղևորուի Հիւսիսային Կովկաս և Ռուսաստան»։

***

ԹԱՒՐԻԶԻՑ հեռագրում են Daily News-ին, թէ պարսկական զօրքը յամառ կռուից յետոյ հալածեցին քրդերին, որոնք յարձակուել էին պարսկական սահմանագլխի գիւղերի վրայ։ Ապստամբ հայերը քրդերի հետ ընդհարումներ են ունեցել Վանի Աղբակ գաւառում։ Երկու կողմերն ևս մեծ կորուստներ են կրել և յետ են դարձել։ Հայերը վերադարձել են պարսկական հողը և պատրաստվում են նոր յարձակումն գործելու։

***

Այսօր սպասվում է Թիֆլիզում Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին, որին դիմաւորելու գնաց մինչև Կայրէկ կայարան Թիֆլիսի նահանգապետ պ. Բրյոլ։

***

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ հեռագրում են, թէ յուլիսի 31-ին առաւօտեան ժամը 11-ին Երևանեան նահանգապետ կոմս Տիզենհաուզենի ներկայութեամբ գոհացողական մաղթանքներ կատարուեցին և ապա յայտարարուեց, թէ քաղաքային ինքնավարութիւնն սկսում է իր գործունէութիւնը։ Քաղաքային վարչութեան բացման հանդիսին ներկայ էր ահագին բազմութիւն։

***

Օգոստոսի 1-ին Թիֆլիզից ուղևորուեց Բագու Բուխարայի էմիրը և այնտեղից կըգնայ Բուխարա։

***

Ընթերցողները յիշում են Կիւրա վօզալի մեր թղթակցի նամակը, այնտեղ տեղի ունեցած մի սկանդալի վերաբերմամբ։ Այժմ «Պրիազ. Կր» թերթը հաղորդում է որ այդ սկանդալի հերոսը Թիֆլիզին լաւ յայտնի պաշտօնաթող գեներալ (և երդուեալ հաւատարմատար) Կորօլկովն է։ Դէպքը—ասում է «Պր. Կրայ»—տեղի է ունեցել յուլիսի 20-ի գիշերը և գեներալը դաշոյնի թեթև վէրք ստանալով՝ հազիւ կարողացաւ փախչել ու թաքնուել կայարանի ճեմլիքում։ Այդ եղելութիւնը շուտով կըպարզուի, որովհետև ոստիկանութիւնը մանրամասն արձանագրութիւն է կազմել։

***

Մոսկուայում կայանալիք միջազգային բժշկական ժողովի անդամների թիւը արագութեամբ աւելանում է։ Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են թէ արդէն անդամ են գրուել 6000 հոգի։ Արտասահմանեան գիտնականներն արդէն Մոսկուա են հասնում. նրանցից մի քանիսը եկել են ընտանիքով։ Ժողովի կարգադրիչ յանձնաժողովն արդէն պատրաստել է եկողների համար 3000 բնակարան և մշակել է երեք ընդհանուր ժողովների ծրագիրը։ Ժողովը կըբացուի օգոստոսի 8-ին և այդ օրը առաջին ճառերը պիտի խօսեն գերմանական յայտնի պրօֆեսոր Ռուդոլֆ Վիրխով, Փարիզի վիրաբոյժ Կանելօնգ և Լօնդօնի պրօֆեսոր Լ. Բրունդոն։

***

Ամսոյ 30-ին Թիֆլիզի նահանգական դատարանում նշանակուած էր մասնաւոր հաւատարմատար Պլիշչևսկու և իշխան Կ. Բագրատիոն-Մուխրանսկու գործի քննութիւնը։ Ինչպէս ժամանակին հաղորդել ենք, Պլիշչևսկին իշխան Կ. Բագրատիոն Մուխրանսկուց պահանջում է 98,750 ռուբլի՝ իբրև վարձ իր ծառայութեան, որ նա մատուցել է իշխանի հանգուցեալ հօրը, Ի. Կ. Բագրատիոն Մուխրանսկուն. Իսկական պարտամուրհակ, որի վրայ հիմնուած է պահանջը, պ. Պլիշչևսկին ներկայացրաւ դատարանին միայն այդ օրը։ Այդ դօկումենտի մէջ ասուած է թէ իշխան Ի. Բագրատիոն-Մուխրանսկին սկսած 1882 թուականից՝ պարտաւորվում է վճարել տարեկան 5000 ռուբլի Պլիշչևսկուն, իբրև իր հաւատարմատարի. իսկ եթէ պ. Պլիշչևսկին չկամենայ այդ դրամները ամեն տարի պահանջել, այն ժամանակ իշխանը պարտաւորվում է տարեկան 7% վճարել այդ գումարին, որքան ժամանակ որ պահուի այդ իր մօտ։ Բացի դրանից, դօկումենտի մէջ ասուած է թէ իշխան Ի. Մուխրանսկին պարտաւորվում է իր տանը բնակարան տալ պ. Պլիշչևսկուն տարեկան 1500 ռուբլի արժողութեամբ. իսկ եթէ պ. Պլիշչևսկին չկամենայ այդ բնակարանում կենալ, իշխան Մուխրանսկին պարտաւոր է նրան վճարել տարեկան 1500 ռուբլի։

Իշխան Մուխրանսկու հաւատարմատարը խնդրեց 2 ամսով յետաձգել գործի քննութիւնը, մինչև որ ինքը ծանօթանայ նոր դօկումենտի հետ։ Դատարանը յարգեց այդ խնդիրը և գործի քննութիւնը յետաձգեց։

***

Այս տարուան նոյեմբերի 1-ից Կիևում, պրիվատ դօցենտ Ա. Գրէնի հրատարակութեամբ պիտի լոյս տեսնի մի նոր լրագիր «Ռուսիա և Ասիա» անունով։ Լրագիրը ենթարկուած կըլինի գրաքննութեան։

***

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ սեպտեմբերի 1-ից կըբացուի արական կլասիքական գիմնազիոն։ Գիմնազիային կից պիտի լինի պանսիոն գիշերօթիկ աշակերտների համար, միայն այն ժամանակ, երբ դպրոցի յատուկ շէնքը պատրաստ լինի։

***

Մեր աշխատակից պ. Մելիք Պէյլերճեանը, ի լրումն իր նամակի, Դիլիժանից մեզ գրում է.—«Արձագանքի» №83-ում հրատարակուած նամակումս մեր կողմից մի քանի անմեղ սխալներ սպրդել են՝ Դիլիժանում սիրողների ներկայացման մասին. ա) Ոչ թէ Մարգար, այլ որդին Խաչատուր Զլխանցն եղած էր յուշարար, կազմակերպող, եռանդով աշխատողը. բ) Տիգրան Սայեադեանցը աշխատել էր թոյլտուութիւնն ստանալու, գ) իսկ պօլկովնիկ Զրապիշն ձրիաբար տրամադրել էր զինուորական նուագախումբը։

Այդ անձնուէր աշխատողների շնորհիւ Դիլիժանի պէս տեղում երեկոյթը տուել է զուտ արդիւնք 244 ռ. 15 կ., որ սահմանեալ ճամբով կըհասնի հայ գաղթականներին։ Հաշիւը հետևեալն է.

ՀԱՇԻՒ

Յօգուտ հայ գաղթականների Դիլիժանում սիրողների տուած ներկայացման

Մուտք

Ծախսուած տոմսակներից . .	173	40
Նուէր զանազաններից . . .	37	60
Բուֆէտից	100	20
	311	20

Ծախք

Բեմի համար	14	15		
Նուագածուների հիւրասիրութեան. . .	9	—		
Ծառաների վարձ. . .	6	—		
Բուֆէտի համար ծախս.	27	10		
Մարքի.	10	80		
	67	05	67	05
Զուտ արդիւնք.			244	15

որը ղրկուած է Կովկասեան կառավարչապետի դիւանատուն։

***

Պ. Սմբատ Շահազիզեանը մեզ խնդրում է հրատարակել թէ «Ամառնային նուագների» ցանկացողները կարող են ուղակի դիմել Մ. Բարխուդարեանին հետևեալ հասցէով. Москва, Мясниц. ул. д. Ермакова, въ типографію Бархударьянца. Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռ. 50 կոպէկ։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Խնդրեմ այս նամակը հրատարակէք «Արձագանքի» էջերում իբր մի նմուշ մեր ժողովրդական բարքերից։

Անցեալները վախճանուելով Տփխիս քաղաքացի և իմ ծխական Ցարութիւն Իզրաշեանցը՝ թողեց մի կտակ, որով իր ստացուածքի մի նշանաւոր մասը՝ մօտ 50,000 ռուբլու արժէքով՝ կտակում է Ներսիսեան Հոգևոր Դպրանոցին։ Այդ կտակը, բացի սովորական բարեգործութիւններից, պարունակում էր և մի գեղեցիկ դաս հայ ժողովրդին, համեստութեան և պարզութեան.—Հանգուցեալը կըտակել էր թաղել իրան առանց սեւերի, հոգեհացի, անաֆի և առհասարակ ամեն շռայլութիւնից դուրս և . . միայն իր ծխական քահանայի ձեռքով։

Հանգուցեալը իրան կտակակատարներ նշանակել էր պ. պ. իրաւաբաններ Հ. Աթարբեկեանին և Ս. Ցարութիւնեանին և Տփխիսի վաճառական պ. Ա. Կաֆիեանին և պարտք դրել նրանց և իր ամուսնու վրայ, որ հսկեն իր կտակի ճշտիւ կատարման վրայ, և, պէտք է խոստովանել, թէ պ. պ. կտակակատարները և թէ յարգելի այրին ամեն կերպ աշխատեցին յարգել հանգուցեալի վերջին կամքը թէ օրէնքի պահպանութեան և թէ դպրոցի շահերի տեսակէտից։

Ինչ վերաբերում է ինձ, ես շատ կողմերից պարտաւոր էի բառացի կատարել հանգուցեալի վերջին կամքը. նախ՝ որ իբրև իր խոստովանահայր ինձ վրայ սուրբ պարտք էր դրել ամեն կերպ ջանալ, որ չխախտուի իր կտակը, երկրորդ՝ որպէս Ներսիսեան դպրոցի նախկին սան, որ վայելել էր ձրիաբար այդ 80-ամեայ մօր սնունդը, երրորդ՝ որպէս նոյն դպրոցի ուսուցիչ և վերջապէս իբրև մի հայ, որի սրտին շատ մօտիկ էր այդ կտակը, ամեն ճիգ թափեցի և իմովսանն աջակցելով յարգելի կտակակատարներին՝ սրբութեամբ կատարեցինք կտակի ամեն մի խօսքը։

Սակայն մինչև հանգուցեալին հողին կըյանձնէինք՝ սխալուած եղայ նրա

—Թո՛ղ էթա, մի տանի, աղէս ո՛րդե ա էս մթնագիշերին, ասաց Մարօն յուզուած ձայնով։

—Չէ, չէ, մի էթա, թո՛ղ սովորի, թէ իմ աղէն ա, հըմի սըրգեսր ընի կըգայ։

Հազիւ խօսքը դեռ նոր էր վերջացրել Մուշեղը, Ասլանը ձիով կանգնեց վրանի առաջ, անմիջապէս ցած իջաւ, ձին կապեց վրանի առաջ, երկաթէ ցցից, ինքը մտաւ վրանը, սովորականից տըխուր դէմքով։

—Որդի ո՞ւր գնացել, ինչի՞ ուշացար, հարցրեց Մուշեղը խռոված դէմքով։

Արջաձորն ի գացի, պատասխանեց Ասլանը գլուխը կախ գցած։

—Ա՜յ, որդի, ես քե հազար հետ ասեր եմ, որդի որ կէթաս, մեզ սամ տեղդ, գիշեր ըլի, ցերեկ ըլի, հերիք ա, խրատվիր, էս անօրէնների մէջ քի զգուշ պահի, խաթէն ամեն վախտ չի գայ։

—Քա՛, Ասլան ջան, էն վախտը Մարնոսի մէրն էկել, հարցնում էր աղջկան, քա՛, էս վախտին էլ աղջիկը դո՞ւս կըմնայ, ըն էլ էս սարի գլխին, էս անօրէն անհաւատների միջին, որ մեր արնի ծարաւն են, ու մեր հոգու դուշմանը։

Ասլանը լուռ էր, ոչինչ չպատասխանեց, նա գիտէր Մարնոսի ուր լինելը, այդ պատճառով շատ սառն ու անտարբեր մնաց Մարօյի հարցերի վերաբերութեամբ, իսկ Մուշեղը խռոված կանչեց իր երկրորդ հովուին, Ջաւօ, Ջաւօ։

—Հրամմէ, ախա ջան։

—Ջա՛ւո, վազիր Մարնոսենց տունը, հարցրա՛, տես Մարնոսը եկել ա թէ չէ, չըլնի՜ էս շուն քրդերը խեղճ աղջկայ գլխին մի օյին բերած ըլեն, էն վախտը էլ Մուշեղը սաղ չի մնայ, կրակ կըտայ սաղ չադըրները կէրի. քանի Մուշեղի անըմը կայ, քանի Մուշեղին չեն սպանած, քո՞րդ կարա ըստե հայի մի մազին ձեռք տայ, ու դառնալով դէպի Ասլանը, ասաց. վե՛ր կաց, թասիբներդ մեռե՞լ ա, ինչ ես նստե. էլ ո՞ր օրին ես պէտք, վե՛ր կաց, ձին նստիր մի տես, ո՛րդե ա էդ աղջիկը, մաղերիցը բռնիր ու տալով, տալով, տուն բեր։

Ասլանը թէպէտ գիտէր, որ Մարնոսը կորած չէ, բայց հօր անմիջական հրամանը առանց վարկենական դանդաղութեան պէտք է կատարուէր, իսկոյն վերկացաւ, վրանի սիւնից կախ արած կեռ թուրն ու վահանը կապեց, հրացանն ուսը գցեց, հէնց ուզում էր դուրս գնալ թէ չէ, Ջաւօն վերադարձաւ։

—Հա՛, քո՛ւրդ, տանն էր Մարնոսը, անհամբեր հարցրեց Մուշեղը.

—Հրամանք քեզ, ախա ջան, Մարնոսն եկեր ա, տանն ա,

—Էհ, քո թարս լեզուն անիծած, ասաց Մուշեղ ծիծաղելով, դէ լաւ, ապրես, Ջաւօ, քեզ քնիր, ոչխարներին լաւ մտիկ արա, դէ՛, գազան չմօտենայ։

—Զատ լաւ, ախա ջան, ծծրակը քորելով Ջաւօն, ակրօջ քաղցր խօսակցութեան վրայ ուրախացած հեռացաւ։

—

Գ.

Ո՞ւր էին Ասլանն ու Մարնոսը, ինչո՞ւ էին նրանք երկուսն էլ միասին և միաժամանակ անյայտացել, այս անորոշ մտքերը տեղիք էին տալիս Մուշեղին ու Մարօյին կասկածել Ասլանի ու Մարնոսին մէջ յանկարծ երևացող սիրոյ կայծի մասին։

Այդ երկու ազգականները թէպէտ հասակ առածներ էին, թէպէտ միշտ միմիանց մօտ գնալ, գալ ունէին, բայց այդ երեկոյթը չէր կարող հարևաններին տեղիք տալ որևէ չար միտք յղանալու նրանց անարատութեան մասին. այդ նշանակում էր մեղանչել գիւղական պարզ կեանքի առաջ, գիւղացու համեստ մտքի, խղճի և իդէալի առաջ, որ դրոշմուած է գիւղացի օրիորդի և երիտասարդի անմեղ սրտերի վրայ, «սուրբ և անարատ մնալ, մինչև կանաչ կարմիր կապելը, թագն ու պսակն արժանանալը»։

Ասլան ու Մարնոսը այդ օրը միմեանց պատահել էին լճի եզերքում, միմեանցից անտեղեակ, առանց մէկը միւսի գիտութեան, այդ երկու սրտերի մէջ երկար տարիների ընթացքում ծածկուած անյայտ սէրը այդ օրը իր լրումն էր ստացել, իր վերջնական վախճանին պիտի հասնէր, եթէ կատարուէր որոշած նպատակը, այդ օրը Ասլանն ու Մարնոսը վճռել էին մի հարց, որ կեանքի և մահու խնդիր էր, բայց չիրականացած։

Այդ օրից Մարնոսը փոխուած էր, նա ծփում էր սիրային աշխարհի ալիքների մէջ, յուզմունք, սէր, խանդաղատանք, այդ բոլորը միմիանց խառնուած նրան յափշտակել էին դէպի երևակայական աշխարհը, այդ բոլորը ստեղծել էին նրա ապագայ կեանքի համար մի մթնոլորտ, մի ոսկէ ասպարէզ, որի մէջ Մարնոսը շփոթուած խարխափում էր գտնել իր սրտին ու հոգուն ամենամօտ ու կենդանութիւն տուող առարկան։

Մարնոսն այլ ևս չունէր դէմքի ընդմիշտ ուրախութիւնն ու զուարթութիւնը, նա տխուր էր, խորասուզուած միմեանց յաջորդող անվճռական մտքերի մէջ, խոյս էին տալիս նրանից ազատութիւնն ու համարձակութիւնը, այժմ նա հարմանական խոհեմութիւնը ունէր, նրա ներքին գաղտնի պատերազմը խռովում է նրան, աւելի խիստ և աւելի բորբոքուած, նա այրվում էր ամբողջ հոգւով, այրվում էին և նրա շուշանածաղ անմեղ շրթունքները, որոնց վրայ առաջին անգամ դրոշմել էր Ասլանը իր անհուն սիրոյ համբոյրը։

Անցնում էին միմիանց յաջորդող ամարային օրերը, մօտենում էր մթութեան ժամը, Գայլատան լճի ափերը զարդարուած էր անթիւ նորեկ հեռաւոր կողմերից եկած հիւրերի վրաններով, աղջիկ, կանայք, խումբ խումբ հաւաքուած աղբերակունքների մօտ, ժամերով խօսում, ծիծաղում, կըկչում էին, առանց տուն շտապելու, և բոլորի խօսակցութեան նիւթը, Դիարբաքիրից եկած Բաղըր-աղայի որդի Զարօն էր, իր արաբական ձիով։

—Էս անգամ ֆըլայ Մուշեղը էլ տանից դուրս չի գայ, ասում էր բարձրաձայն ծիծաղով քրդուհիներից մէկը։

—Մուշեղը դուրս չի գայ, նրա որդի Ասլանը դուրս կըգայ, այդ մի հաշիւ է, աւելացրեց երկրորդ քրդուհին տխուր ձայնով, Ասլանը հօրից պակաս գազանը չէ, քրդի սուրը նրանց վիզը չի կտրում. յիշո՞ւմ էք, Բայազիտու կռուի ժամանակ Մուշեղի վիզը կէսից կտրել էին քրդերը, բայց էլի չմեռաւ, ո՛, անիծուին էդ օձի ծնունդները, դրանց հէր ու աղի մօտ կայծակի կտոր կայ, չէյխ *) Օզմանը թալիմ է արել որ էս անգամ էդ գեավուրների թէն ու սար կապուին, թուլանան, վեր ընկնեն։

Քրդուհիների այդ նախատական խօսակցութիւններին ներկայ էր Մարնոսը, նա ակամայից զգում էր իրան, ճնշվում էր տանել այդ սառը նախատինքը, նա յուզվել էր, նրա դէմքը այլայլվում էր սրտի նեղութիւնից, կարծես բուլէապէս կամենում էր վրէժխնդիր լինել անճոռնի քրդուհիներից, իր հրեշտակի, իր պաշտելիի համար, բայց այդ դժուար էր, այդ չէր յաջողուի անել նրան, հետևապէս նա որոշեց յաղթութիւնը տանել առժամանակ լռութեան մէջ

Դ.

1877—78 ռուս-թրքական պատերազմի ժամանակ, երբ Բայազիդը պաշարուած էր, Մուշեղը ռուսաց կամաւորների պահակումն էր գտնվում, Իսմայէլ խանի հրամանատարութեան տակ։ Բերդը պաշարուած էր, թուրք ու քուրդ անկանոն չէյխ Իբրագուլահի զօրքերով։ Ռուսները գեներալ Տէր Ղուկասովի առաջնորդութեամբ խլեցին մեծ քաջութեամբ բերդը և ազատեցին պաշարուած բերդականներին. այդ ժամանակ Մուշեղը պատերազմի հերոսներից էր, իր քաջ և յանդուգն բնաւորութեամբ, մահը նրա համար հարսանիք էր, իսկ կռուելը կատակ։ Նա Բայազիտի երկրորդ խենթն էր, այն զանազանութեամբ միայն, որ Մուշեղը աւելի ճարպիկ խորամանկութիւն չգիտէր. նրա խորամանկութիւնը հաստատ կամքի և ջղային ուժեղ բազուկների մէջ էին գտնվում։ Նրա վզի կէսը թշնամու սրից կտրուել էր, բայց և այնպէս այդ հանգամանքում ևս նուիրուած էր գործին, այդ բոլորի փոխարէն քաջ և անձնուէր հերոսը վարձատրուած էր ռուսական մի քանի մեդալներով և արծաթեայ նաւօրսկու խաչով։ Մուշեղի անունը քրդական իւրաքանչիւր ցեղին ծանօթ էր, նրա դուռը բաց էր ամենքի համար։ Նա չէր կարող մեղանչել հիւրասիրութեան ընդունուած օրէնքի դէմ, հազարաւորներ նրա հացը կերել էին, նա իր անյողդողդ բնաւորութեամբ շատերի համակրութիւնն էր գրաւել և շատերի նախանձը գրգռել։ Մուշեղը բարձրահասակ էր, աչքերը սև, ու խիտ արտեւանունք-

*) Քրդի կրօնաւոր։

եղբօր և քանի մի ազգականների կողմից կրել այնպիսի վիրաւորանքներ իմ պարտքիս ճշտիւ կատարման համար, որոնց ես տանել չէի կարող բոլորովին ուրիշ հանգամանքներում․ Ես շատ լաւ զգում էի այդ ժամանակ, թէ ինչքան նեղութիւնների և արգելքների հանդիպած պիտի լինէր տակաւին չորրորդ դարում մեր երանաշնորհ Ներսէս Մեծ Հայրապետը, որ եկեղեցական ժողով էր գումարում ննջեցեալի յուղարկաւորութեանը սեւ հագնելն և աւելորդ շռայլութիւնները ժողովի կանոններով արգելելու համար․ զգում էի այդ ամենը և համբերում՝ կամքի դէմ գործող անձանց տուած վիրաւորանքներին։

Հանգուցեալի կամքի իմ կողմից ճշտութեամբ կատարման հետևանքն այն եղաւ, որ ես ստացայ հետևեալ նամակը․

«1897 ամի հունիսի 28-ին Տփխիս.

Բաւէկրօն Տէր-Գիւտ.

Տնային հանգամանքներս ստիպում էն ինձ խապար հերանալ ձէր հլուիթիւնից ուստի խնդրեմ հանէք ինձ ձէր ծխականէրի թվից, որովհետև ես և իմ մայրըս և եղբայրս ընարել էնք մեզ համար հօգևօր հօվիվ.

Ձէր ծառայ Վասիլ Իսրբաշեանց»։

Մենք էլ ոչինչ չունենք աւելացնելու այս օրինակելի պատժային վարմունքի վրայ, բայց միայն այս, որ նախ՝ պ. Իսրբաշեանի հետ երբէք մի այլ անախորժութիւն ունեցած չենք և որ մեր 17-ամեայ քահանայագործութեան ընթացքում սա է ծխական այսպէս վարուած չունի մեր դէմ. մնացեալ եզրակացութիւնը թողնում ենք անել ամեն մի բանիմաց հայի։

Գիւտ ա. ք. Աղանեանց։

ՄԻ ԴԱՏ ՍՈՒԼԹԱՆԻՆ ՎԻՐԱՒՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

—

Փարիզի ուղղիչ ոստիկանութեան դատարանի 9 րդ բաժնում յուլիսի 23-ին քննւում էր երիտասարդ թուրքերի կուսակցութեան բերան «Մեշվերէթ» լրագրի երկու հրատարակիչների՝ Ահմէդ Ռիզայի և Հալիլ Հալիլէյի դէմ յարուցուած մի հետաքրքրական գործ․ Դրանք մեղադրւում էին նորին մեծութիւն սուլթանին վիրաւորելու համար։ Դատախազը յայտարարեց, թէ ֆրանսիական դատական իշխանութիւնը ստիպուած էր այս դատը բանալ թուրքաց դեսպանատան բողոքի հիման վրայ։ «Մեշվերէթ»-ից սուլթանի վրայ գործուած յարձակումներն արտատպող ֆրանսիական թերթերը պատասխանատւութեան չէին հրաւիրուած, որովհետև թուրքաց կառավարութիւնն այդ չէր պահանջել։ Դատախազը խոստովանում է «յարգելի մեղադրեալների» արժանաւոր բարձր վարկը Թուրքիայից արտաքսուած երիտասարդ թուրքերի մէջ, բայց պահանջում է գործադրել 1893 թ. օրէնքը, որի զօրութեամբ օտարերկրեայ պետերին վիրաւորողը ենթարկւում է բանտարկութեան 3 ամսից մինչև 1 տարի ժամանակով և մինչև 3000 ֆր. տուգանքի։

Մի շարք վկաներ, որոնց թւում կային և ֆրանսիական մի քանի լրագրողներ, ցոյց տուին, որ թիւրքական գործերից իրենց ստացած անձնական տպաւորութիւնը կատարելապէս արդարացնում է «Մեշվերէթի» յարձակումները։

Պիէր Կիլարը, որ մի հեղինակութիւն է թիւրքական գործերի վերաբերմամբ, ասում է, որ Կ. Պօլսում երիտասարդ թուրքերի շարքն են դասւում այն ամենքին, որոնք ձգտում են ռեֆորմներ ստանալու։ Երիտասարդ թուրքերին անխնայ կերպով հալածում են, թունաւորում են նրանց, ծովն են թափում, աքսորում են եւ այլն։

Ալֆրէդ Բերլ, գրող, որ նորերս է վերադարձել Թիւրքիայից, ասաց, թէ Ստամբոլում և Պերայում միայն լաւ կարծիքներ է լսել երիտասարդ թուրքերի, մանաւանդ Ահմէդ Ռիզայի մասին։ Երիտասարդ թուրքերին համակրում են մինչև անգամ թիւրքական պաշտօնեաները. նրանք չեն հաւատում երիտասարդ թուրքերի, իբրև կուսակցութեան, ուժին, բայց երբէք չեն կասկածում նրանց շարժառիթների մաքրութեան վրայ։ Եւրոպայում նրանց յեղափոխական են համարում, բայց նոյն մտքով յեղափոխական են հանդիսանում և բոլոր մտածող թուրքերը։ Բերլը նկատեց որ Թիւրքիա մտնելիս ճանապարհորդին ամենից առաջ ապշեցնում է ընդհանուր ամայութեան և աղքատութեան տխուր տեսարանը։ Պաշտօնեաները աննպաստ կարծիք յայտնելով իրենց երկրի մասին, խնդրում են, որ չհրատարակւի իրենց անունը, որովհետև դրա համար կըկախեն իրենց։ Վկային խորհուրդ էին տալիս բացարձակ խօսակցութիւն չունենալ, ում հետ ուզում է լինի, որովհետև Կ. Պօլսում ամեն մարդ կարող է լրտես լինել։

Ռոշֆորը, որ չէր կարողացել անձամբ դատին ներկայ լինել, հեռագրել էր դատարանին, որ սուլթանի պատուիրակ Զիա փաշան կաշառք էր առաջարկել իրեն «Intransigeant» լրագրին (Ռոշֆորի լրագիրը) տրամադրելու թուրքաց կառավարութեան օգտին։

Ֆրանսիական մի լրագրող ցոյց տուեց, որ Կ. Պօլսում պաշտօնական շրջաններում ինքն առիթ է ունեցել լսելու, թէ փորձեր են եղել Ահմէդ Ռիզային կաշառելու, որ նա լռի,—փորձեր, որ նա զայրացած մերժել էր։

Նիստի ամենահետաքրքրական կողմը Կլեմանսոյի վկայութիւնն էր։ Նրա ասածը պաշտպանողական մի փառաւոր ճառ էր, որ հասարակութիւնը շարունակ ընդհատում էր հաւանութեան նշաններով։ «Դժուար է,—ի միջի այլոց ասաց Կլեմանսօն,—յանդիմանել Ահմէդ Ռիզային սուլթանի դէմ խիստ բառերի համար, այն բանից յետոյ, երբ մեծ Գլադստոնը սուլթանին անուանեց «մեծ մարդասպան»։ Չի կարելի թոյլ տալ, որ սուլթանը կարողանայ Ֆրանսիայում դատապարտել տալ մի մարդու, որ արևելեան գործերի վերաբերմամբ նոյն կարծիքներն է յայտնել, ինչ որ յայտնում էին յայտնի ֆրանսիացիներ և աւելի խիստ ձևով։ Որովհետև նրանց ոչ ոք ձեռք չի տալիս, այդ պատճառով չի կարելի դատապարտել Ահմէդ Ռիզային այն հիման վրայ միայն, որ թրքահպատակ է»։

Տաս րոպէ խորհրդակցելուց յետոյ, դատաւորները կարդացին դատավճիռը, որի մէջ ճանաչւում է մեղադրեալների անբասիր բնաւորութիւնը և ասւում է, թէ նրանց վարմունքը բաւական արդարացնում է հայկական կոտորածների յարուցած ընդհանուր զայրոյթով։ Դատարանը մեղադրեալներին դատապարտում է 16 ֆր. տուգանքի, բայց տալիս է նրանց Բերանժէի օրէնքի արտօնութիւնը, որի զօրութեամբ դատապարտութիւնը լինում է միայն պայմանական։

Ներկայ եղող հասարակութիւնը ողջունեց այդ խելացի արդարացնող դատավճիռը բարձրաձայն ծափահարութեամբ։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԸ ԹԻՖԼԻԶՈՒՄ

—

„Bibliothèque Universelle et Revue Suisse“ հանդէսը իւր վերջին համարներից մէկում հրատարակել է պ. Րէդերի (M. Reader) մի ընդարձակ յօդուած „Le théatre arménien à Tiflis“ (եր. 349—377) վերնագրով։ Հեղինակը մեծ համակրութեամբ է խօսում հայերի նորագոյն մտաւոր շարժման մասին և մեր գրականական զարգացման ապացոյցներից մէկը համարում է հայկական բեմի պատմութիւնը, որ և կազմում է յօդուածի նիւթը։ Պ. Րէդերը հայագէտ չէ. նա կարդացել է «Քանդած օջախը» գերմաներէն թարգմանութեամբ և, ռուսաց լեզուին հմուտ, իւր տեղեկութիւնների մեծագոյն մասը քաղել է յարգելի պ. Վեսելովսկու «Հայոց թատրոնի պատմութիւնից»։

Մի քանի խօսք ասելով Միքայէլ Պատկանեանի մասին, որ 1859 թուին գրել էր իւր «Մօղիբալը», նա խօսում է մեր պատկառելի դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանցի վրայ, որին և նուիրուած են ամբողջ 20 էջեր։ «Գաբրիէլ Սունդուկեանցը, ասում է հեղինակը, որ ծնուել է 1825 թուին Թիֆլիզում, ծագում է վաճառականական գերդաստանից. նրա հայրը շատ էր ճանապարհորդել Եւրոպայում և Գաբրիէլը լաւ կրթութիւն ստացաւ։ 1846-ին նա դարձաւ Պետերբուրգի համալսարանի ուսանող, ուր ուսումնասիրելով իւր մասնագիտական առարկաները, միևնոյն ժամանակ բուռն սէր զգաց դէպի թատրոնական ներկայացումները, նուիրելով իւր բոլոր երեկոները գլխաւորապէս «Միքայէլեան թատրոնին», ուր այն ժամանակ խաղում էր ֆրանսիական խումբը։ Վերադառնալով Թիֆլիզ, Սունդուկեանը ամուսնացաւ մի երիտասարդ հայուհու հետ, որ բացառապէս տեղական կրթութիւն էր ստացել. սա մեծ ազդեցութիւն ունեցաւ իւր ամուսնու ճաշակի և ձգտումների վըրայ։ Գ. Սունդուկեանցի ուշադրութիւնը կենտրոնացաւ Հայաստանի և նրա հաճախի արտայայտութեան վրայ»։

Այս կենսագրական տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ հեղինակն անցնում է «Խաթաբալայի» („qu'on pourrait traduire par „Scandale“ ou „Malheur“), «Էլի մէկ զոհի» (Uil-Meg zo է գրում պ. Րէդերը), «Պէպօյի», «Քանդած օջախի» (Le Nid ruiné) բովանդակութեանց, որև շատ գրաւիչ կերպով պատմում է։ Սունդուկեանցին, եզրակացնում է պ. Րէդերը, կարելի է համարել հայկական ազգային բեմի հիմնադիր. մենք տեսանք, որ նա ստեղծել է հասարակութեան համարեա թէ բոլոր դասակարգերի տիպեր։ Այս թատրոնի բէալականութիւնը, որ առիթ է տուել հասարակութեանը տեսնել բեմի վրայ կենդանի անձնաւորութիւններ, լսել մայրենի հարուստ և անոյշ լեզուն և միևնոյն ժամանակ քաղել ամեն մի պիեսից մի բարոյական կրթական գաղափար—բացատրում է, թէ ինչու Սունդուկեանցի գրուածքները երկար ժամանակ զարդարում էին բեմը և այժմ էլ պատուաւոր տեղ են բռնում»։

Այնուհետև հեղինակը խօսում է Աղէքսանդր Բէջմիշեանի «Օրիորդ Եւրոյեանի» մասին, մի թատերագրութիւն, որ, յօդուածագրի ասելով, բովանդակում է իւր մէջ «Հայաստանում վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած ողբալի դէպքերի մի նախազգացումն»։

Ապա պ. Րէդերը առանձին սիրով կանգ է առնում պարոն Մուրացանի «Ռուզանի» վրայ, ուր հայ օրիորդը ներկայացրած է իբրև հայրենեաց յոյս։

«Այս գրականական վերածնութիւնը, ասում է իւր յօդուածի վերջում զուիցերացի հրապարակախօսը, մի երջանիկ նշան է ապագայի համար. մի ազգութիւն, որ ընդունակ է իւր իդէալին նոր այժ տալ մտաւոր զարգացման աշխարհում, յաղթող կըհանդիսանայ խաւարի և կոպիտ ուժի դէմ մղած կռուի մէջ»։

Տայ Աստուած, որ այդպէս լինի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԲՈՂՈՔԸ

—

Լրագիրը լուր բերեց, որ Աթէնքի կառավարութիւնը բողոքում է պետութեանց որոշման դէմ եւրոպական կոնտրոլ նշանակելու մասին Յունաստանի ելևմտից վրայ, մինչև անգամ հաղորդուած էր և այն թէ, յունաց թագաւորը հրաժարուել պատրաստ է գահից, եթէ յիրաւի այդ կոնտրօլը կարգադրուի։ Հաւանական է, որ փոքր Յունաստանը վերջ ի վերջոյ ստիպուած լինի զիջանել պետութեանց ճնշման, բայց և այնպէս խիստ նրա բողոքն արդար է, որովհետև մի բարեկարգ եւրոպական պետութեան վրայ ելևմտից կոնտրօլ նշանակելն ոչ այլ ինչ է, եթէ ոչ անվստահութիւն նրա վրայ. իւր ելևմտից կանոնաւոր և խնայողական գործադրութեան վերաբերութեամբ, ուստի և շատ բնական և իրաւացի է Յունաստանի բողոքը։ Խաղաղութեան դաշնագրի մէջ այս յօդուածը չկար, պետութեանց մեծ մասի որոշումն էր, որ պատերազմական տուգանքը միանուագ վճարուի և տաճիկ զօրքերն անմիջապէս հեռանան Թեսալիայից, որ անհրաժեշտ է Յունաստանի վիճակը կարգի գնելու համար։ Միայն այստեղ էլ Գերմանիան, որի համար իւր մի պամերանցի գինուորի կեանքը մի այլ ամբողջ ազգի կեանքից ու պատուից թանկ է, իւր հպատակների (Յունաստանի պարտատէրերի) մասնաւոր շահերն աչքի առաջ ունենալով, գուցէ և իւր թըրքամոլութիւնից դրդուած դիմադրեց պետութեանց որոշման և դրականապէս յայտնեց, որ ինքը ոչ մի կերպով համաձայն չէ, որ տուգանքի միանուագ վճարման պատճառով վըճառ կըլինեն իւր մի քանի հպատակները։ Պետութիւնները կամենալով եւրոպական ներդաշնակութիւնը պահպանել՝ զիջան Գերմանիայի պահանջին և որոշեցին, որ պատերազմական տուգանքն մաս առ մաս վճարուի և տաճիկ զօրքերի մի մասը մնայ Թեսալիայի մի քանի կէտերում (Վոլո), մինչև վարձատրութեան վճարումն։ Այս որոշումն չօշափում է ոչ միայն Յունաց կառավարութեան, այլև յոյն ազգի պատուասիրութիւնը։ Տարակոյս չկայ, որ թէ Յունաստանի կառավարութիւնն և թէ յոյն ազգն ամեն ջանք գործ կըդնեն, որքան հնար է շուտով վճարելն իրանց տուգանքն և ազատեն իրանց երկրի ամենընտիր և արդիւնաւոր մի մասը տաճկի տիրապետութիւնից, որովհետև, եթէ Թեսալիան երկար մնայ տաճիկ իշխանութեան ներքոյ, Յունաստանը կըզրկուի իւր արդեանց նշանաւոր մասից և տուգանքի գումարն ոչ թէ $4\frac{1}{2}$ միլիօն, այլ 10 միլիօն կըհասնի։ Հաւանական է, որ կըյաջողի յունական կառավարութեան մասնաւոր փոխառութիւններով և ազգի պատուասիրութիւնից ազդուած տուրքերով շուտ վճարել իւր պարտքը, որով թէ մի տեսակ բարոյական յաղթանակութիւն տուած կըլինի Եւրոպայի, առաւելապէս Գերմանիայի չահամոլութեան և միւս կողմից իւր պատուական նահանգը ազատ կըլինի տաճիկ զօրքի կատարեալ աւերածութիւնից և անբարոյականացնող ազդեցութիւնից, Մինչդեռ դըժուար էր եւրոպական մեծ պետութեանց այնպիսի չնչին գումարի համար երաշխաւոր լինել։ Ձենք տարակուսում, որ Յունաստանը իւր պատիւը կըպահպանէ, քանի որ յոյն ազգի մէջ շատ կան հարուստ ազգասէր անձինք, և կանայք, ինչպէս հաղորդեցին լրագրները, որոնք իրանց թանկագին զարդերը ծախել և դրամը յանձնել են կառավարութեան տնօրէնութեան։ Այսպիսի կանայք ունեցող երկիրը անտարակոյս շուտ կըկազդուրուի։

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՃԱՓՈՆԻԱ.— «Berliner Tageblatt»-ի Պետերբուրգի թղթակիցը հաւատացնում է, թէ Ռուսիան ցանկանում է շատ շուտով վերջ տալ յոյն-թրքական խնդրին, որովհետև նրան անհանգիստ է անում ծայրագոյն արևելքի քաղաքական վիճակը և նա ցանկանում է որ իւր ձեռքերը բոլորովին ազատ լինին Խաղաղ ովկիանոսում գործելու համար։ Պետերբուրգում—ասում է թղթակիցը—թէև չեն վախենում անմիջական դժուարութիւններ ծագելուց, այնու ամենայնիւ ենթադրում են թէ Ճափոնիան՝ թըշնամի լինելով Ռուսիային Կորէայի հարցի համար՝ պատրաստ է ամեն հանգամանքից օգտուելու Ռուսիային վնասելու համար և աշխատում է զինման կողմից կատարեալ վիճակի հասնել։ Ճափոնական նաւատորմիղը բաւական ուժեղ է. չինական պատերազմի ժամանակ վնասուած նաւերը նորոգուած են, բացի դրանից՝ նրանց թիւն աւելացել է չինացիներից խլուած նաւերով և, վերջապէս, Չինաստանից ստացած պատերազմական տուգանքի մեծ մասը ճափոնացիք գործ են դրել նաւատորմիղի և զօրքի բարւոքման վրայ։ Մի քանի տարուց յետոյ, երբ Անգլիայում և ուրիշ տեղերում պատուիրուած նաւերը պատրաստ լինեն, ճափոնական նաւերի թիւը և ուժն այնքան մեծ կըլինի, որ նրանց հետ մրցելու համար Ռուսիան ստիպուած կըլինի կենդրոնացնել Մեծ ովկիանոսում Բալթիկ և Սև ծովերի իւր նաւատորմիղները. իսկ Ռուսիան—ասում է թղթակիցը—իւր նաւատորմիղը չէ կարող ուժեղացնել, որովհետև դրա համար պահանջուած միջոցները չունի։ Ճափոնական կառավարութեան բռնած ուղղութիւնը կռուասիրական է. կառավարութեան ղեկն այժմ համարձակ և ազատ մտածող անձանց ձեռքն է, որոնք հետևում են հասարակական կարծիքի հոսանքին և

ներով, գանգրահեր և լայնաթիկունք։ Մուշեղի անունը թէ հեռու, Թիւրքիայի զանազան կողմերում, և թէ մօտ Երևանեան նահանգի բոլոր գաւառներում արձագանք էր գտել, հետևապէս հայ ու քիւրդ ժողովրդական երգիչները չէին մոռացել իրանց մտաւոր ստեղծագործութիւնների մէջ յիշել Մուշեղի արկածաւոր կեանքի գործերը, որոնցից մի քանի տող այստեղ բերենք թարգմանաբար քրդերէնից և հայ գիւղացի օրիորդների ասածներից.

Քրդերէնից.

Բարձրահասակ հայի որդին՝ ամպերի
հետ է կռվում.
Տէգն ու վահան ձեռքին բռնած՝ դէպ
թշնամին է վազում.
Մեռնել, ապրել մէկ է նրան, յառաջ
գնա, մի վախիր.
Սև ձին հեծիր, հայի որդի, դէպ Բայազիտ սլացիր։

Հայ երգերից.

Կրակն ընկաւ, Բայազիտը ողջ այրեց,
Հայ միլիցէն ոչնչացաւ, սպանուեց.
Խայլին թուրը խօսքը փոխեց. յետ դարձաւ,
Բայազիտից քաջ Մուշեղն ազատուեց։

Կաթնաղբիւրի ջուրը ցամքեց կորվեց.
Քուրդն ու ջօլօն բերդի չորս կողմը բռնեց։
Մանուկներին կոտորեցին, այրեցին,
Բայազիտից քաջ Մուշեղը ազատուեց։

Ե.

Մի քաղցրիկ առաւօտ էր. այգաբացը դեռ նոր էր բացուել. իւրաքանչիւր վրանի առաջից ծուխն ու մուխը բարձրանում էր ոլորապտոյտ օդի մէջ. Անասունների քակերներից պատրաստուած կրակների վրայ դրուած էին կաթնով լիքը մեծ ու փոքր պղնձէ կաթսաներ, սանտիկինները շտապում էին կաթը տաքացնել, քանի որ արևը չէր դուրս եկել, օրը չէր տաքացել, որպէս զի կաթը չփչանայ, չկտրուի. տաւար ու ոչխար վաղուց էին դուրս գնացել արօտ, հարսն ու աղջիկ, իւրաքանչիւր իւր զբաղմունքը, իւր գործն ունէր, շատերը փոխադարձ օգնութեամբ ժողոված այս կամ այն վրանի տակ գորգեր, կարպետներ էին գործում, այծի մազերից պարաններ և ուրիշ տնային հարկաւոր իրեղէններ հիւսում, պատրաստում։

Այդ օրը Մարինոսը նոյնպէս հրաւիրուած էր իրանց հարևանի վրանում կարպետ գործելու. յետնային եթէ գիւղական ժողովրդի մէջ այդ կերպ փոխադարձ օգնութիւնը, որպէս սուրբ պարտականութիւն, կատարվում է առանց գեղծումի, առանց մազաչափ անգամ շեղուելու այն պարզ և տարրական ուղղութիւնից, որը նոյն ժողովրդի կեանքի և սրտի հիմնաքարն է կազմում։

Մուշեղը, որ բարիլուսից առաջ դուրս էր գնացել, ոչխարները խուզելու համար պատուէրներ տալու հովիւներին, տուն վերադարձաւ. յոգնածութիւնից էր, թէ ներքին յուզմունքից, դողդոջուն ձայնով ասաց.

—Ասլան, վեր կաց, ձին տար Կուլապ *) Նալբանդ Դէվօյի մօտ, նալել տուր, ասա, որ բարակ նալ խփեն։

Ասլանը, որ երբէք դիմադարձ չէր գտնուել հօր հրամաններին, սուս ու փուս, ձէն ծպտուն չհանեց, վերկացաւ տեղից և պատրաստվում էր գնալ, բայց զանազան խառն մտքեր ստիպեցին Ասլանին հարցնելու։

—Ափօ, էս կանուխ խոտերի միջին ընչի ես ձին նալել տալի, ուրիշ տեղ պտի էթաս։

—Չէ, լաօ ջան, դու քըլա նալել տուր, արի յետոյ կասեմ։ Մուշեղի մութ խօսքերը Ասլանի մէջ այլ և այլ մտքեր յարուցին. միթէ հայրս ուզում է հեռու տեղ գնալ, այժմ ձի նալելու ժամանակ չէ, մտքերի փոփոխակի ապաւորութեան տակ վեր առաւ իւր ճանապարհորդական պատրաստութիւնները, հրացանն ու կեռ թուրը, վահանն ու մի զոյգ ատրճանակ՝ թամբի առաջից կախած՝ ձին քաշեց, համբուրեց նրա զգայուն աչքերը ու նստեց։

Սևաթոյր նժոյգը զգալով իւր վրայ նստող անձնաւորութեան ով լինելը, սկսեց փնչել, ոտքերով գետինը բանդել, գլուխն այս ու այն կողմը դարձնել, խաղալ, վեր ու վայր թռչել և զանազան նշաններով կամենում էր հասկացնել տիրոջը իւր հպատակութիւնն ու հնազանդութիւնը։

Ասլանը սլացաւ առաւօտեան ժամերին սեպհական թարմ և հովասուն օդի մէջ, մեղմ զեփիւռից ծածանւում էր նժոյգի բաշը, առանց սպանդակելու զգայուն կենդանին թռչում էր սարից ձոր, ձորից սար, անզգալի կերպով, շուտով տեղ հասնել, առանց ժամանակ կորցնելու տիրոջը նպատակին հասցնել։

Ասլանը Կուլապում ուշանալու ոչ մի պատճառ չունէր, ձին պայտեց և անմիջապէս տուն վերադարձաւ, ուղիղ կէս օրին, ուղիղ այն ժամանակը, երբ Մարօն ու Մուշեղը ճաշուայ հացը կերած, պատրաստած Ասլանի վալասեանն էին սպասում։ Գիւղացիք կրօնի հակառակ, մինչև անգամ մեղք են համարում ճաշելու ժամանակ խօսելը, գուցէ այդ և իւր օգուտն ունի առողջապահական տեսակէտից. երբ ճաշը վերջացաւ, Ասլանը սովորականի համեմատ պատրաստեց մի հասա ծխախոտ և առաջարկեց հօրը։ Մուշեղը թիք ընկած, արմունկը բարձի վրայ դրած, ոտքերը մեկնեց կապերտի երկարութեամբ և դառնալով դէպի Ասլանը, ասաց.

—Սիրելի Ասլան, դու գիտես, որ մենք էս քանի տարի ա Քեալաչ աղի հայլաղն ենք գալում, էն մարդը մեզ պատվըմ ա, մեզ սիրըմ ա, մեր մէկի խաթրին չի դիպչըմ, բասանք բոլորը իմ ջոչաղութեան ու իմանալուն համար ա, էս բոլոր չաղրների գլխաւորի իրաւունքը մեզ ա ավե, տաքի չի ըլի, որ ուրիշ հայլաղներից էլ ոչխար, տաւար չզողանան, ամա էսքան վախտ մեր չաղրներից մի ու, եա մի ոչխար կորել ա. մի հարայի ձէն, մի գողութիւն պատահելիս, ամենքը Մուշեղին են կանչըմ, իմ արևովն են երդվըմ, ամա իմ խելքը իմ գլխին ա, լաօ ջան, քըզի ոչ ծիծաղին հաւատա, ոչ ընդուր բարեկամութեանն։ Հըմի տեսնըմ ես, էլ Մակվից, Դիադրաբքից, Բայազդից, Էրզրումից մարդ չի մնացել, թափվել, էկել են, երեք օրից յետ ջրղի և ղալեանով կալելու օրն ա։ Քեալաչ աղան ըսօր ինձ ասաց, որ էս անգամ ես մէյդան չպտի դուս գամ, ասաց, որ բոլորն ազար, ջահէլ տղէրք պտի ըլին, ով որ յաղթեց, էն ա եասան ոսկի փէշքաշը կառնի։

Վերջին խօսքերն արտասանելու ժամանակ սկսեց տատանուել և աւելի տաք ու վրդովուած կերպով սկսեց ծխել, իսկ Ասլանը անհամբեր սպասում էր, թէ երբ կըվերջացնի Մուշեղը իւր խօսքերը, արդեօք կըկատարուի՞ իւր սրտի ցանկութիւնը։

—Հիմա, լաւ լսիր, սիրելի որդի, շարունակեց Մուշեղը, եթէ օտարները թասիբ ունեն, մենք էլ մեր թասիբն ունենք, դէ, ասա, սըրդի, որ քեզ ըղըրկեմ իմ տեղակ, կարո՞ս հօրդ ու ազգիդ պատիւն ու անըմը պահել, ասա, պատասխան տուր։

Ասլանը, որ ուշի ուշով լսում էր հօր խօսքերը, հէնց նրա հարցին էր սպասում, ուստի առանց տատանուելու, առանց զգացմունքներից խեղդուելու, պատասխանեց։

—Աստծու զօրութեանով կարամ, ափօ, ես էն ջահէլ լամուկներից պակաս եմ, չէ, ափօ ջան, ես կըմեռնեմ, իմ ազգի անըմը չեմ խայտառակի, գետնով չեմ տայ։

—Դէ որ էդպէս ա, որդի ջան, մրի, չոքիր, մօրդ ձեռքը համբուրի, ընդու (նրա) օրհնութեանը առ։

Ասլանը ծունկ չոքեց, հօր ու մօր ձեռքը համբուրեց, նա սրտի ուրախութիւնից ամբողջ մարմնով դողում էր։

—Այ կնիկ, օրհնիր տղին։

—Ի՞նչ օրհնեմ, սուրբ Սարգիս զօրավարը քեզմակ ըլի, որդի ջան, բարով պարզ էրէս դուս գաս, էդ անօրէններին մեզ վրայ չուրախացնես, սուրբ Սարգիսը քեզ թև ու թիկունք ըլի, չար աչքերը խաւարին, քեզ մի նազար չդիպչի, բարով կանաչ կարմիրդ էլ կապենք։

—Դէ, քըլա, լաօ ջան, աւելացրեց Մուշեղը, քըլա քու բան ու գործին, էլ ոչինչ ասելիք չունիմ, բարով պարզէրես դուս գաս, քո պապդ էլ տեսնեմ, էդ ա իմ մուրազը, սպիտակ դօշը քեզ մատաղ պտի տամ, քըլա, որդի, հօրդ պատիւն ու խրատը մտքից չգցես, հօրդ տղամարդ գդակը գետնով չտաս, սուրբ Գէորգ զօրավարը հետդ ըլի։

Այս խօսքերը արտասանելու ժամանակ Մուշեղի աչքերի մէջ երևացին արտասուաց կաթիլներ, Մուշեղը լռեց, իսկ Ասլանը դուրս գնաց վրանից։

Մկր. Զաքարեանց։

(Շարունակելի)։

*) Կուլապ գիւղը Մուշեղի ծննդավայրն է, գտնվում է Բաղդադ լեռների ստորոտում և կազմում է Ռուսիոյ և Թիւրքիայի սահմանը։

առաջին յարմար րոպէին պատրաստ են պատերազմ յայտարարել։ Ճափոնիային հանգիստ չէ տալիս չինական պատերազմից ստացած շնչին օգուտը և նա մտածում է դրա պակասը լցնել Կորէայով։ Եւ եթէ Ռուսիան այդ կողմից գիջումներ չանի, կընդհարի Ճափոնիայի թշնամութեան»։

«Նովոյէ Վրէմիան» արտատպելով այս խօսքերն, աւելացնում է թէ նրանց մէջ շատ ճշմարտութիւններ կան, միայն թղթակիցը մոռանում է որ Ռուսիան Չինաստանի պէս հզօր դաշնակից ունի։

ՄԱԿԵԴՈՆԻԱ.—Սոֆիայի այն լրագիրներն, որոնք իրանց նպատակ ընտրած են մակեդոնական բուլղարների շահերը պաշտպանելը, շարունակում են հաղորդել Մակեդոնիայի քրիստոնեաների սոսկալի վիճակի մասին տեղեկութիւններ, յոյս տածելով, որ այդպէսով կարող կլինին Բուլղարիան հանդէս բարշելու ի պաշտպանութիւն Մակեդոնիայի բուլղարներին։ Այդ լրագիրների հաղորդած տեղեկութիւնները մռայլ գոյներով նկարագրում են ոչ միայն Տաճկաստանի քրիստոնէից, այլ և նոյն իսկ տաճկական կայսրութեան վիճակը, ուր իշխանութիւններն այնքան թոյլ են, որ, եթէ ցանկանալու էլ լինին, չեն կարող առանձին աւազակային խմբերի բռնաճնշումը զսպել։ Այսպէս գործոնեակ «Гл. Макед.» լրագիրը հաղորդում է, որ Բիթոլի նահանգում ներկայումս խաղաղ բնակիչների վրայ սարսափ են գցում երկու աւազակներ՝ Կարաքաչար և Ձեֆրի, որոնք ազատ շրջում են։ Սրանցից իւրաքանչիւրը, մի խումբ կազմելով, գիւղացիների վերաբերմամբ անում է իւր բռնաճ կարգադրութիւնները. նրանք տուգանք են դնում, բանտարկում են, յափշտակում են, բռնաբարում են, մահուան երկիւղ են տալիս, բնակարաններն այրում են —և նրանց դէմ ձայն հանել չեն համարձակւում մինչև անգամ տեղական տաճիկներն, լաւ իմանալով, որ ոչ մի տաճիկ իշխանութեան մօտ արդարադատութիւն գտնելու չեն։

ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ.—Կ. Պոլսում դիւանագիտական շրջանները շատ անհանգստանում են տաճիկ նաւատորմղի Արշիպելագոս դուրս գնալով, մտածելով որ, եթէ նա երևի Կրետէի ջրերում, կղզու մահմեդականների անձնապաստանութիւնն ու յանդգնութիւնն աւելի թեժ կ'առնեն, որ կծանրացնէ կղզու վիճակը։ Ինչպէս «Times»-ը ասում է, Ջէվատ-փաշայի վարմունքն էլ ապացուցանում է, որ նա, իբրև կղզու նախկին հմուտ նահանգապետ և մօտիկ ծանօթ թէ տեղական հանգամանքներին և թէ շատ ազդեցիկ անձանց, աշխատում է հաշտեցնել կղզու քրիստոնեայ և մահմեդական տարրերն և այդպէս Դրան կշիռը վերականգնել, դէթ մասամբ և նրա իշխանութեան նշխարները գոնէ պահպանել Կրետէում։ Բայց ապստամբների գլխաւորները հասկանալով նրա խորամանկ քաղաքականութիւնն, ամեն կերպ արգելք են լինում նրա այդ նպատակին, արգելում են քրիստոնեայ բնակիչների յարաբերութեանց մահմեդականների և Ջէվատ փաշայի հետ։ Նրանք իրանց և Ջէվատի մէջ անանցանելի միջնորմ դնելու համար, հիմնուելով ծովակալների յայտարարութեան վրայ, թէ յոյն-տաճկական խաղաղութեան դաշնագրի հաստատուելուց յետ, հոգս կտարուի Կրետէի ինքնավարութեան գործադրութեան մասին, եւրոպական ծովակալներին ուղղեցին հետեւեալ զեկուցագիրը. «Ձեր կառավարութեանց կարգադրութեամբ հրատարակուած յուլիսի 5-ից յայտարարութեամբ դուք հրապարակաւ յայտնեցիք կղզուս բնակիչներին, որ մեծ պետութիւնք անդառնալի որոշումն են կայացրել ապահովել Կրետէին կատարեալ ինքնավարութիւն, որով կրետացիք բոլորովին պիտի ազատուին Դրան իրանց ներքին գործերի մէջ խառնուելից։ Կրետացիք այն ժամանակ հնարաւոր համարելով իրագործել իրանց աւանդական ցանկութիւնը միանալու իրանց յունական հայրենիքի հետ, մերժեցին ինքնավարութեան առաջարկութիւնը, բայց ապա տեսնելով, որ քաղաքական հանգամանքների բերմունքով իրանց յոյսերը խափանւում են և միւս կողմից տեսնելով, որ մեծ պետութիւնք այդ հանգամանքներից յետոյ էլ անփոփոխ են պահում իրանց որոշումն և յայտարարութիւնը, Կրետէի բնակիչները մեզ ներկայացուցիչ ընտրելով յանձնեցին յայտնել ձեր գերազանցութեանց, որ մեր յունական հայրենիքի օրինակին հետևելով մենք էլ մեր երկրի շահերը յանձնում՝ ենք մեծ պետութեանց բարենպատակ հոգացողութեան և շնորհակալութեամբ ընդունում ենք առաջարկուած լիակատար ինքնավարութիւնը, ենթադրելով, որ տաճիկ զօրքերը կհեռանան մեր կղզուց։ Երբ զօրքերի հեռանալը տեղի կ'ունենայ, կրետացիք գէնքը վայր կ'դնեն և այսպէս կվերցուին սպառնացող վտանգները, որոնք, մահմեդականների կարծիքով, իբրև թէ գոյութիւն ունին։ Իբրև լիազօրներ այս մեր ծանուցագիրը ձեր գերազանցութեանց ուղղելով, խնդրում ենք ձեզ գործ դնել ձեր բոլոր ազդեցութիւնը, որ շուտով ապահովուի մեր լիակատար ինքնավարութիւնը և վերցուի այն վիճակն, որ անտանելի է դառնում մեզ համար։»

«Times»-ի թղթակիցը հաւատացնում է, որ վերոյիշեալ ծանուցագիրը կրետացիների և յեղափոխական մասնաժողովի միաձայնութեան ցանկութեան և կարծիքի արտայայտութիւնն է, և այս Կրետէի քրիստոնեաների առաջին յայտագիրն է յօգուտ ինքնավարութեան։

ՋԱՆԱԶԱՆ

Ելեկտրական ծառը, որ գտնւել է Նարեբում Հնդկաստանի նախնական անտառներում, վերջին նորութիւնն է բնագիտութեան մէջ։ Այս բոյսը, որի գտնողը անուանել է նրան „Philotacea electrica", այն առանձնայատկութիւնն ունի, որ ամեն անգամ, երբ կամենում են կտրել նրա մի ճիւղը, տալիս է ձեռքին զօրեղ ելեկտրական հարուած։ Մինչև անգամ քան մետրից աւելի հեռաւորութեան վրայ էլ այդ անհասկանալի ծառից մագնիսական սլաքը թեքվում է։ Նրա ելեկտրական ույժի լարուածութիւնը օրուայ ընթացքում մի քանի անգամ փոփոխում է. ամենամեծ զօրութեան հասնում է նա կէսօրին, իսկ կէս գիշերին և անձրևային եղանակին նա կարծես բոլորովին ոչնչանում է, այնպէս որ մինչև անգամ մագնիսական սլաքով էլ անհնարին է լինում նրա ներկայութիւնը հանդէս բերել։ Philotacea electrica-ի ճիւղի վրայ ոչ մի թռչուն կամ սողուն չէ նստում, անշուշտ բնազդմամբ զգալով ծառի մէջ թագնուած զօրութիւնը։ Այդ ծառերի մօտիկ շրջակայքում գետնի մէջ չեն գտնում ոչ մի մագնիսացող մետաղ, որպիսին են երկաթը, նիկելը կամ կոբալդը։ Բոյսերի բնախօսութեան մասնագէտները ենթադրութիւն են յայտնում, թէ այդ ծառի մէջ ելեկտրական զօրութիւն յառաջանում է գիտութեան դեռ ևս անյայտ բնախօսական գործողութիւններով։

Նոր թնդանօթներ. „Matin" լրագիրը հաղորդում է, որ գնդապետ Ումբէրը (Humert) շատ նշանաւոր գիւտ է արել, որ յանձնել է կառավարութեան տնօրինութեանը։ Այդ գիւտը թնդանօթ է, որ արձակելիս ոչ յետ է խփում, ոչ բոց է արձակում, ոչ ձայն և ոչ էլ ծուխ հանում։

«Այս պայմաններում, յայտնեց գնդապետ Ումբէրը, թշնամին կ'ենթարկուի ամբողջ հարուածներին, առանց իմանալու, թէ որտեղից են նրանք գալիս»։

Թնդանօթի ձայնը լսելի կլինի միայն 1000 —1200 մետր հեռաւորութիւնից, մինչդեռ հրացանի պատերազմը սկսում է 5000 և աւելի մետր հեռաւորութիւնից։

Նոյն յարմարութիւնը յատկացրած է և հրացանին։

„Matin"-ի տեսլովը, գինուորական և ծովային նախարարները արդէն առանձին յանձնաժողով են նշանակել այս գիւտը հետազօտելու համար, որ կարող է մեծ նշանակութիւն ունենալ եթէ նա յաջողուի։

Ամերիկայի միլիոնատէրերը իբրեւ մարենավարներ. Ներկայումս ամերիկացի միլիոնատէրերի սիրելի զբաղմունքն է երկաթուղու գնացքներին ղեկավարութիւնը։ Սատարը ամեն շաբաթ մի անգամ ղեկավարում է Իլլինոյսի կենդրոնական երկաթուղու էքսպրեսը։ Փուլդն ինքն է կառավարում միշտ իւր գործածութեանց համար կազմուած առանձին արտակարգ գնացքները։ Ցամսոնն արդէն բաւական համբաւ է ստացած իբրև հմուտ մեքենավար։ Գիլլը արդէն մի քանի անգամ կառավարել է Հիւսիսային մեծ երկաթուղու գնացքները Ատլանդեան և Խաղաղական (Մեծ) ովկիանոսների միջև։

Ժամանակաւոր խմբագիր՝
Ե. ԽԱՉԱՏՐԵԱՆ
Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Տփղիս, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Դ. ԴՈՒՐԿՕ.—12½—1½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խաշրդացական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի եայլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝
Բժ. Ա. Դ. ԴՈՒՐԿՕ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Մշտական մահճակալների բաժնով
ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ
(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐԴԵՇԵՆԿՈՅԻ)
Սօլօլակ, Դանովսկայա փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վիրաբուժական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ԶՈՒԴԵՆՎԻՉ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին-բժիշկ ԵՒ. Կ. ԿԱՐԳՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Գ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԴԷՆՑ, գեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի եայլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, ելեկտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ դպրոցում վերաքննութիւնները սկսուելու են օգոստոսի 26-ին, իսկ նորեկ աշակերտների քննութիւնները սեպտեմբերի 2-ին։ Նորեկների խնդիրները կընդունուին օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 1-ը։ Խնդիրների հետ պէտք է անպատճառ ներկայացնել 1) ծննդական վկայականը (խոկական և ոչ քաղուածք) և 2) ծաղկի վկայականը։

Առանց վկայականների աշակերտները չեն ենթարկուի քննութեան։

Սեպտեմբերին կընդունուին նոյնպէս անգրագէտ աշակերտներ։ (4—3)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացուած են և վաճառւում են հետևեալ նոր գրքերը.

	ռ.	կ.
Արծրունի բժշկապետ Վ. Ժանտախտ Վ. 1897 թ. գինն է.	—	20
Բարխուդարեանց Գ. Բանաստեղծութիւններ. Թ. 1897 գինն է. . .	1	—
Գալֆայեան, Պատմութիւն նոր կտակարանի 1897 թ. գինն է. . .	—	50
» Նոյն Հին կտակարանի, Վ. 1897 թ. գինն է.	1	—
Խալաթեան Դր. պրօֆ. Ա. և Բ. Մնացորդաց գրքերի հայ թարգմանութիւնը Վ. 1897 թ. գինն է.	—	15
Կարապ. վարդ. Երուսաղեմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, Վ. 1896 թ. գինն է.	—	15
» Յովհաննու իմաստասէրի հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնացելոյ բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, Վ. 1896 թ. գինն է.	—	15
Կոստանեանց Կ. Համամ, արևելցի, Վ. 1896 թ. գինն է.	—	20
» Տէր Պետրոս Ա. գետադարձ, Վ. 1897 թ. գինն է. .	—	10
Թ. Նեօլդէքէ, Պատմութիւն Սասանեան տէրութեան, Վ. 1896 գ. . . .	—	30
Տէր - Մովսեսեան Մ. Վ., Սսկրտայ պատմութիւն եկեղեցական և վարք Սրբոյն Սեղբեստրոսի, Վ. 1897 թ. գինն է	—	60
» Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, Վ. 1897 թ. գինն է	2	—
Տէր - Միքելեան Ա., Սրբոյ հօրն մերոյ երանելի Գրիգորի Լուսաւորչի յաճախապատում ճառք յաւուրք Վ., 1896 թ. գինն է. . .	1	—
Տէր - Մկրտչեան Գ., Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքած Դարիս և Ամոնի վկայից որ վկայեցին, յուահա, Վ. 1896 թուի գինն է	—	50
Տէր - Աւետիքեան Սա. Ղեկավարներ գ. ա. I Կապ բանալը II Մեր Տէրը Թ., 1897 թ.	—	9

Մամուլի տակ է և շուտով լոյս կընծայի նոյն Տէր - Աւետիքեանի «Սամփսարնի» վէպիկը։ (10—3)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կեղրոնի գործարանական հաշուեհաշուութեան։

բ) Առևտրական թղթակցութիւն։

գ) Առևտրական նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենավառ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

Ցանկացողները թող գիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սագովայեա փողոց, տուն Մարգարովի, № 27։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախւում է Թիֆլիսի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—9)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՌՕՍՍԻԱ"
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.
Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահւում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1896 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների եւ բանուորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները, գիւղէնտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահ-կարասիքների, եայլն։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝ ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—45)



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie"

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն
„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ."
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 6-18 օգոստոսի ՄԻՆԳՐԵԼԻ շոգենաւը, նաւապետն է ՃԸԼՏ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների . . . . տը եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնուրին, Նաբերեժնայա։

Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բաբեկ<...>նեանին, Միխի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։

Բաքւում.—Պ. Ս. Դիլբարեանին, Կոլիւբակինի հրապարակ։

Նովօրոսիյսկում.—պ. Մելխոր Հաշբենրօդերին։ (20—8)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՕՐ"
Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՌՈՒԲԼԻ ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ծովային, գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլուխ, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխն ապրուստի միջոցներ համար հնգուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ Թիֆլիզում (Վելիամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ Կայսրութեան բոլոր քաղաքներում։ (100—32)

ԵՆԵՄԻՑ ՆՈՒԱԲԲԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՒՈՒՄ ԲԱՔՈՒՈՒՄ ԵՆ
ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
Ծրագիր. 1) Առևտրական թղթակցութիւն, 2) Կրկնակի հաշուապահութիւն—նաւթային արդիւնաբերական գործարանային, առևտրական բանկային և այլն, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Գեղագրութիւն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ԻՍԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲ. 20-ԻՑ

Դասընթացների հիմնադիր Ա. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ։

Վաճառւում է դասընթացների հիմնադրի նոր գիրքը. «Նաւթային արդիւնաբ. գործարանային համառօտ հաշուապահութիւն»

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ (20—6)

Дозволено цензурою, Тифлисъ 2-го Августъ 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.